ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ

Հետազոտող ուսուցիչ՝ Ջեմմա Հարությունյան

ԲԱՆԴԻՎԱՆԻ Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Սիրվարդ Թամազյան
անուն, ազգանուն

ԳՅՈՒՄՐԻ- 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր դպրոցի խնդիրը ոչ միայն սովորողների կրթամակարդակը բարձրացնելն է, այլև նրանց գիտելիքները ինքնուրույն լրացնելու և ժամանակակից տեղեկատվության օվկիանոսում կողմնորոշվելու, հետազոտելու կարողություններ ձևավորելը: Հետազոտական մտածողության գործընթացը ենթադրում է ինչպես նորի որոնումը, այնպես էլ արդեն ձեռք բերած գիտելիքների գործածումը: Ցանկացած հետազոտական աշխատանք որոնողական քայլերի շղթա է, որի հաջողությունը պայմանավորված է ուսուցչի աշխատանքի իմաստալից պլանավորումից:

Կրթությունը, ըստ հանրակրթական պետական չափորոշչի, ներառում է սովորողի յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժա-հոգեբանական աշխատանքները, մշակութային, բարոյական, ազգային ու համամարդկային արժեքները: Ժամանակակից մանկավարժության մեջ կրթության առաջնային նպատակ է ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և սովորելու մշակույթ դաստիարակելը:

Աշակերտը պետք է գիտելիքներ ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի ինքնուրույնաբար՝ որոնողական, հետազոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում: Ինքնուրույն գործունեության զարգացմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական-որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը, ինքնագնահատման կարողությունների զարգացումը: Արդի կրթական համակարգում, ընդհանրապես, տարրական դասարաններում մասնավորապես բացառիկ տեղ է հատկացվում սովորողներին՝ ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու կարողությունների ձևավորումը:

Ուստի մերօրյա մանկավարժի գործունեությունը չպետք է սահմանափակի սովորողի ստեղծագործական որոնումների շրջանակը: Ընդհակառակը ուսուցման գործընթացն աշակերտներին պետք է <u>ինքնադրսևորման</u> և <u>ինքնազարգացման</u> հնարավորություն ընձեռնի: Դա իրականացվում է սովորողների կողմից նորը փորձարկելու, բացահայտումների, ուսումնասիրության ընթացքում ինքնուրույն գործունեություն ծավալելու միջոցով: Ուսուցիչը, ուղղորդելով, աջակցելով,

սատարելով հանդերձ, պետք է աշակերտին՝ աննկատ ու անձայն հուշի. «Փորձի՛ր ինքնուրույն հաղթել արդյունքի հասնելու քո ճանապարհը»։ Մինչդեռ այսօրվա մեր հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա է սովորողների ինքնուրույն գործունեություն ծավալելու կամ իրենց գործունեությունն ինքնուրույն կարգավորելու կարողությունների խնդիրը։

Ինքնուրույն գործունեության զարգացմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական- որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը։ Խաղը երեխաներին սովորեցնում է իրենց գործողություններն ու մտքերը ծառայեցնել որոշակի նպատակի, դաստիարակում նպատակասլացություն։ Հետազոտությանս նպատակն է՝

Կիրառելով «Համագործակցային» մեթոդը, խաղի միջոցով հասնել աշակերտների ինքնուրույն գործունեության բարձր արդյունավետությանը։

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ա. Ի. Սավենկովն ասել է, որ ուսուցումը պետք է լինի պրոբլեմային։ Այն պետք է պարունակի ինքնուրույն հետազոտական գործունեության տարրեր, կրի անհատական ստեղծագործական բնույթի որոնումների կնիքը։ Այդ դեպքում կրթությունը ոչ թե սոսկ վերարտադրողական բնույթ կկրի, այլ կվերածվի ստեղծագործական գործունեության։ Նման իրավիճակներում կաշխուժանան երեխաների շփումներն ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ, և նրանց մեջ կձևավորվեն դրական կենսափորձ ու անձնային նոր որակներ։

«Երեխայի վզին փաթաթած» թեման, ինչքան էլ մեզ՝ մեծերիս կարևոր թվա, անհրաժեշտ արդյունք չի ունենա։ Երեխային հետաքրքրող թեմա ընտրելու համար հարկավոր է նրան լսել, ուսումնասիրել նրա հետաքրքրությունները։ Դա բարդ, սակայն լրիվ իրագործելի մանկավարժական խնդիր է։ Հետազոտական աշխատանքը պետք է սկսել առաջին դասարանից։ Դրանք կարելի է զարգացնել խաղերի տարաբնույթ աշխատանքների միջոցով, որոնք կակտիվացնեն երեխաների ստեղծագործական գործունեությունը։

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ինքնուրույնությունը մարդու կարևորագույն հատկանիշներից է, ինչի ձևավորումը սկսվում է բավականին վաղ տարիքում: Աշակերտների ինքնուրույն գործունեության կարողությունների զարգացումը բարելավում է ուսուցման գործընթացը, որն ունի ուսուցիչների և սովորողների առջև դրված խնդիրների լուծման համատեղ ելքեր, որոնք կիրառվում են կրթության որակը բարելավելու նպատակով: Աշակերտների ինքնուրույն գործունեության կարողությունների զարգացումը կրթության բարելավման և բարեփոխումների փուլում առավել արդիական է, տեղեկությունների հավաքման գործընթացի անբաժանելի մասն է: Երեխայի ինքնուրույնությունը արտահայտվում է նրա կյանքի բազմաթիվ ոլորտներում՝ ինքնասպասարկում, խաղեր, մշակութահիգենիկ, հանրօգուտ գործունեություն, շրջապատի հետ շփումներ և այլն: Ինքնուրույնության ձևավորման մեջ մեծ դեր է հատկացվում տարրական աշխատանքային գործողություններին: Դեռ ավելին, աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը և աշխատանքային հանձնարարություններ կատարելու պահանջմունքը ձևավորվում են մանկական ինքնուրույնության շրջանակներում:

Կրտսեր դպրոցական երեխաների առանձնահատկություններից են՝ առանց մեծահասակի օգնության գործողությունների կատարման նկատմամբ ակտիվ հակվածությունը և ինքնուրուրույնության ձգտումը առավել բնորոշ է փոքրիկներին: Դա աճող օրգանիզմի ներքին պահանջմունք է և այն անհրաժեշտ է պահպանել ու զարգացնել: Ինքնուրույնությունը փոխում է երեխայի զբաղեցրած դիրքը հասակակիցների միջավայրում: Նա ավելի ազատ է երեխաների հետ շփման մեջ, հանդես է գալիս որպես համատեղ խաղի գործուն մասնակից, արտահայտում է շրջապատող մարդկանց, փոքրքհասակներին օգնության ձեռք մեկնելու ցանկություն: Մեծահասակների կողմից երեխայի ինքնուրույնության զարգացման անտեսումը , ոչ բավարար ուշադրություն դարձնելը անխուսափելիորեն կհանգեցնեն անգործության, քմահաճույքների, համառության, շրջապատողների վրա հույսը դնելու վնասակար սովորույթի առաջացմանը: Անթույլատրելի է բաց թողնել ինքնուրույնության ձևավորման անգամ մեկ հնարավորեություն: Որքան շուտ սկսել աշխատանքն այդ ուղղությամբ, այնքան լավ արդյունքների կարելի է հանգել: Կրտսեր տարիքի

երեխաների հետ աշխատողը պետք է իմանա, որ ինքնուրույնության զարգացումն անհնար է առանց հատուկ պայմանների ստեղծման, առանց պարապմունքների, խաղերի, կենցաղում գործունեության համապատասխան կազմակերպման, առանց կրթման ու դաստիարակման արդյունավետ մեթոդների օգտագործման, առանց երեխաների վրա ակտիվ ներազդման: Կրթական ծրագրերում սահմանված են կրտսեր դպրոցական երեխաների ինքնուրույնության զարգացման մակարդակի նկատմամբ ներկայացվող պահանջները: Տրվում է դրա բնութագիրը՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները: Ինքնուրույնության ձևավորումը դիտարկվում է որպես այդ աստիճանում դաստիարակության առաջատար խնդիր : Ծրագիրը պատկերացում է տալիս ինքնուրույնության՝ որպես փոքր երեխաների կյանքի բոլոր կողմերը շոշափող բնավորության բարդ գծի վերաբերյալ: Ծրագրերում ընդգծվում է ինքնուրույնության ձևավորման և փոքր երեխաների գործունեության բոլոր ոլորտներում վարքի շտկողական աշխատանքներում համակարգային մանկավարժական մոտեցման կարևորությունը: Նշվում է, որ բոլոր դաստիարակչական խնդիրների կարգավորման համար միայն ինքնասպասարկումը բավարար չէ: Կենցաղում երեխաների մոտ թույլ է ձևավորվում պայմանավորվելու ունակությունը, ուրիշների նկատմամբ պատասխանատվության զգացումը, «հրամանի» պայմաններում գործելու սովորույթը և կատարողականությունը: Դա պարտավորեցնում է դաստիարակողներին երեխաների մեջ ջանասիրաբար ու համառորեն ինքնուրույնություն ձևավորել խաղի, աշխատանքային հանձնարարությունների կատարման ընթացքում, պարապմունքների ժամանակ: Պարապմունքների ընթացքում ինքնուրույնությունն արտահայտվում է մտավոր և գործնական աշխատանքի հմտությունների ձեռքբերման և ամրապնդման մեջ[1]:

Օրինակ՝ ուշադիր լսել պատմվածքը, հեքիաթը, պատասխանել հարցերին, փոխանցել ոչ բարդ բովանդակությունը, ինքնուրույն փնտրել նկարի թեման, իրականացնել մտածածը: Կրտսեր դպրոցական երեխաների ինքնուրույնությունն արտահայտվում և ձևավորվում է վարքի, շրջապատողների և հասակակիցների հետ շփման իրենց գործողությունների և արարքների գնահատականի մեջ: Երեխաների

[1] Շ.Ա. Ամոնաշվիլի. Բարև՛ երեխաներ: Ձեռնարկ ուսուցչի համար «Լույս» 1990:

մեջ ինքնուրույնություն ձևավորելով ՝ ուսուցիչը պետք է հիշի այն մասին, որ խաղային, աշխատանքային, ուսումնական խնդիրների կատարումը երեխայից պահանջում է խաղալու, պարապելու, կառուցելու, շրջապատողների հետ խաղային և գործնական շփման մեջ մտնելու, իր անձնական և հոգևոր պահանջմունքներն ինքնուրույն բավարարելու ունակություններ: Դրա համար անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներ: Փոքր պարտականությունների, իրերի , մարդկանց նկատմամբ վերաբերմունքի մասին տեղեկությունների և համապատասխան ունակությունների ձևավորումն ինքնուրույնության կայացման անհրաժեշտ պայմաններ են: Սակայն միայն ունակությունները և տեղեկությունները բավարար չեն : Անհրաժեշտ են երեխաների կենսափորձի հատուկ կազմակերպում, կուտակված տեղեկությունների և հմտությունների օգտագործում, ակտիվ ինքնուրույն գործունեությունը խթանող պայմաններ: Այս շարքին կարելի է դասել նաև ինքնուրույն գործողությունների նկատմամբ հետաքրքրության առաջացումը, ոչ բարդ, բայց հետաքրքիր խնդիրների առաջադրումը խաղի մեջ , պարապմունքների ժամանակ, առօրյա կյանքում դրանց ինքնուրույն լուծումից ուրախության ստեղծումը: Էական նշանակություն ունի դժվարությունները հաղթահարելու, ջանքեր գործադրելու, գործը մինչև վերջ հասցնելու կամային ունակությունների ձևավորումը: Երեխաների մեջ ինքնուրույնության որակներ մշակելու նպատակով գիտելիքների և հմտությունների ձևավորումն անհրաժեշտ է կապել դաստիարակչական այլ գործընթացների հետ: Երեխաները շատ շուտ են մտնում շփման մեջ, օգնության ձեռք են մեկնում նրանց , ովքեր դրա կարիքն ունեն, ցուցադրում են իրենց ձեռքբերումները: Այդ կերպ նրանք վարժվում են իրենց յուրացրած գիտելիքների և հմտությունների կիրառման մեջ:

Ինքնուրույնության ձևավորման համար անհրաժեշտ է կիրառել դաստիարակչական-կրթական աշխատանքի ամբողջական համակարգ: Աշխատանքային նյութերը պետք է ընտրված լինեն այնպես, որպեսզի դրանք շահագրգռվածություն առաջացնեն նախկինում ստացած գիտելիքները և հմտությունները կիրառելու համար: Ինքնուրույնության ձևավորման արդյունավետությունը կախված է խմբերում ընկերական գործնական մթնոլորտից և հատկապես ուսուցչից: Ուսուցչի խոսքը պետք է լինի հանգիստ, առանց ավելորդ

բառերի՝ երեխաներից ակնկալելով ուշադրություն, ուսուցչի յուրաքանչյուր խոսքին արձագանքելու սովորություն: Ուսուցչի մեղմ խոսքը նպաստում է, որ երեխաները հաճույքով մասնակցեն ցանկացած գործունեությյան, ինչն էլ իր հերթին հեշտացնում է գիտելիքների և ունակություններ յուրացմանը: Ինքնուրույնության ձևավորումն իրականացվում է ուսուցչի և երեխաների ակտիվ փոխգործակցության պայմաններում:

Անհրաժեշտ է հիշել, որ երեխաների ինքնուրույնությունը չի հերքում մանկավարժի կողմից ղեկավարումն ու վերահսկումը: Ինքնուրույնության ձևավորման մեջ կարևոր է հատկապես այն ժամանակահատվածը, երբ երեխաները նոր են սկսում յուրացնել ամենօրյա փոքրիկ պարտականությունների վերաբերյալ պահանջները՝ ինչպես պետք է վերաբերվել իրերին և առարկաներին, ինչպես շփվել շրջապատողների հետ: Գիտելիքների և ունակությունների ձևավորումն իրականանում է կենսականորեն անհրաժեշտ նմուշների դիտարկման պայմաններում՝ յուրաքանչյուր կոնկրետ փաստի, գործողության հանդեպ հետևողականության ցուցադրմամբ, պահանջի բովանդակության և դրա կատարման եղանակի մանրամասն բացատրությամբ: Այս կամ այն պահանջի ուսուցանումը պետք է իրականացվի կամ անհատական կարգով, կամ երեխաների ոչ մեծ խմբին ցուցադրելու և բացատրելու միջոցով: Ուսուցիչը աշխատանքի վերաբերյալ հուշելուց բացի պետք է այն ՝ ինքնուրույն ընտրելու շահագրգռող ուղղորդիչ հարցեր տա նրանց: Դրա համար հարկավոր է օգնել երեխաներին՝ կոնկրետացնելու աշխատանքները , որպեսզի նրանք ի զորու լինեն և վստահ լինեն, որ կարող են իրենց ուժերով կատարել դրանք: Անհրաժեշտ է նախապես մտածել աճող բարդության խնդիրների համակարգի շուրջ, որոնց լուծումը կառաջացներ ուժերի լարում , կպահանջեր գործադրել անհրաժեշտ կամային ջանքեր ՝ դժվարությունները հաղթահարելու համար: Աստիճանաբար դժվարացող խնդիրների կատարումը ամրացնում է նյարդային համակարգը, բարձրացնում կենասկան ուժը, պահանջում առավոլագույն ակտիվություն և համառություն: Երեխաներին պետք է նախապատրաստել աշխատանքին, տալ խորհուրդ ՝ ինչպես և ինչի համար օգնություն ցուցաբերել, հիշել, թե ինչպես է պետք կատարել առանձին գործողությունները:

Կրտսեր դպրոցական երեխաների ինքնուրույնության ձևավորման համար մեծ նշանակություն ունի նրանց վարքի և գործունեության վերլուծությունը, խրախուսումը, ինքնուրույն դրսևորումների գնահատականը[2]: Կարևոր է այն, որ ինքնուրույն գործողություններն առաջացնեն հասակակիցների, մեծահասակների ուշադրությունը, այն հրավիրել երեխայի ինքնուրույնության ձգտման փաստին և ընդգծել դրա նշանակությունը: Գնահատականը նույնպես ինքնուրույնության զարգացման հզոր միջոց է: Երեխաները ձգտում են սեփական շահագրգռոությամբ իրենց համար զբաղմունք գտնել, ինքնուրույն կատարել անհրաժեշտ գործողություններ: Ինքնուրույնության մասին խոսելիս հարկ է անդրադառնալ մի շարք այլ հասկացությունների և մոտեցումներ: Ասենք ՝ ինչպե՞ս է այն զուգորդվում կարգապահության հետ, որքա՞ն ինքնուրույն և որքա՞ն կարգապահ պետք է լինի երեխան: Երբ խոսում ենք ուսումնական ինքնուրույնության մասին , անպայման հարց է ծագում . իսկ եթե երեխան չի ուզում սովորել , ապա ի՞նչ ինքնուրույնության մասին կարելի է խոսել: Այս դեպքում մենք կարիք ունենք պարզաբանելու և խոսելու ուսումնական մոտիվացիայի մասին: Չենք կարող խուսափել նաև տարիքային առանձնահատկությունների և տվյալ տարիքում ինքնուրույնության չափի և վերահսկողության մասին խոսելուց:

Կրտսեր դպրոցական տարիքին այնքան էլ բնորոշ չեն ճանաչողական առանձին հետաքրքրություններ ՝ կոնկրետ առարկայի հանդեպ. նման հետաքրքրությունները սովորաբար ունենում են առանձնահատուկ կարողություններով օժտված երեխաները: Առաջադիմող աշակերտներին հատուկ է առավել հետաքրքրվածությունը ավելի դժվար առարկաների հանդեպ: Ճանաչողական դրդապատճառների կարևորագույն սպեկտորը ուսումնաճանաչողական ինքնակատարելագործման մոտիվն է: Եթե սովորելու ընթացքում երեխան ուրախանում է, որ ինքն ինչ-որ նոր բան իմացավ, ինչ-որ բան սովորեց, ապա նրա մեջ զարգանում է ուսումնական գործընթացին համապատասխան մոտիվացիա: Սակայն, նույնիսկ, բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների մեջ շատ քիչ են իրական ուսումնաճանաչողական մոտիվացիա ունեցողները:

[2] Շ.Ա. Ամոնաշվիլի, Մարդասիրական մանկավարժության հիմնադրույթներ:

Հաջողության հասնելու բանաձևը (ոչ հազվադեպ) կրտսեր դպրոցականների ամենաուժեղ ցանկությունն ու մոտիվն է դառնում: Լավ առաջադիմություն ունեցող աշակերտները դրսևորում են հաջողության հասնելու մեծ ցանկություն:

Ինքնուրույնությունը անձի ընդհանրացված հատկություն է , որը դրսևորվում է նախաձեռնողականության, քննադատականության, համապատասխան ինքնագնահատականի և սեփական վարքի ու գործողությունների համար պատասխանատվության զգացման մեջ: Մ.Մոնտեսորիի կարծիքով՝ երեխային պետք է անընդհատ սովորեցնել, թե ինչպես նա ցանկացած գործողություն կատարի ինքնուրույն[3]: Նա մարդուն համարում է կարգապահ, եթե տիրապետում է ինքն իրեն , կարողանում է կազմակերպել իր վարքն ու գործունեությունը է համապատասխան հասարակական և մարդկային տարբեր իրավիճակների և կանոնների: Մրդը րի կարող ազատ լինել , եթե նա ինքնուրույն չէ: Փոքր երեխաները ձգտում են ինքնուրույնության դեռևս շատ վաղ հասակից: Այսինքն՝ դա երեխայի բնական պահանջմունքն է և գոյատևման կարևոր պայմանը: Յուրաքանչյուր մասնագիտական մանկավարժական մոտեցում այս կամ այն կերպ պետք է նպաստի երեխայի ինքնուրույնության զարգացմանը : Հաճախ մենք ծառայում ենք երեխաներին, ցանկանալով կյանքը նրանց համար հարմարավետ դարձնել, սակայն դրանով ուղղակիորեն ճնշում ենք երեխայի ինքնուրույնությունը և խանգարում նրա հասունացմանը:

Երեխայի զարգացման ընթացքում մենք օգնում ենք նրան կատարելու այն, ինչը ինքը չի կարողանում ինքնուրույն անել, ապա ապագայում նա այդ գործողությունը կարողանում է կատարել ինքնուրույն, առանց մեր օգնության: Ապագայում արդեն առաջանում են նոր գործողություններ, որոնց կատարման համար երեխան ունենում է մեր օգնության կարիքը: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ օգնել, այլ ոչ կատարել երեխայի փոխարեն: Այս տեսակետի վրա է հենվում ինքնուրույնության զարգացման և ձևավորման մանկավարժական աշխատանքը: Այս գործընթացը պահանջում է երեխայի կարողությունների, տարիքային առանձնահատկությունների մանրակրկիտ իմացություն: Դրա համար պետք է և՛ լավ ճանաչել երեխային, և՛ իմանալ այդ

[3] М. Монтессори. Помоги мне сделать это самому

տարիքի առանձնահատկությունները։ Պետք է չմոռանալ , որ չի կարելի ոչինչ անել երեխայի փոխարեն, այլ հարկավոր է աջակցող, սատարող օգնություն ցույց տալ կոնկրոտ գործողություններ կատարելիս։ Անընդհատ պետք է սատարել երեխայի ինքնուրույն գործողությունները։

Վիգոտսկին նշում է, որ բացի երեխայի զարգացման տարիքային մակարդակից, կա նաև երեխայի զարգացման իրական մակարդակ՝ այն բոլոր կարողություններն ու հմտությունները, որ երեխան ունի իր տարիքային մակարդակի սահմաններում։ Այն բոլոր կարողությունները, որ երեխան արդեն ունի , կազմում են իր երեկվա զարգացման և ուսուցման արդյունքները, այն պտուղները, որոնք հասունացել են արդեն[4]։ Կան պտուղներ, որոնք հասունացման ընթացքի մեջ են։ Դրանք մատնանշում են երեխայի կարողությունների և հմտությունների զարգացման վաղվա իրավիճակը։ Ահա այս հասունացող և զարգացող կարողությունների և հմտությունների ոլորտում էլ զարգացնում ենք երեխայի ինքնուրույնությունը։

Ինքնուրույն աշխատանք ասելով հասկանում ենք մեծահասակի ՝ մասնակի կամ ամբողջական ղեկավարությամբ աշակերտի լիարժեք կամ առավելապես ինքնուրույն կատարած աշխատանքը։ Որպեսզի աշակերտները հմտանան ինքնուրույն մտավոր աշխատանք կատարելու մեջ , անհրաժեշտ է , որ սկզբնական փուլում դրանք իրագործվեն ուսուցչի ղեկավարության պայմաններում , իսկ հաջորդ փուլերում՝ ինքնուրույն նախաձեռնությամբ։ Սովորողների ինքնուրույն աշխատանքների կատարումները պետք է ունենան փաստերը, երևույթները, օրենքները, օրինաչափությունները ինքնուրույնաբար ճանաչելու, ստեղծագործական գործունեությունը զարգացնելու ուղղվածություն։

Որպեսզի սովորողները կատարեն ինքնուրույն աշխատանքներ, անհրաժեշտ է, որ նրանք ունենան իրենց գործողությունները, գործելակերպը հստակ իրագործելու պատկերացում։ Նրանք պետք է որոշակիորեն իմանան, թե ինչ աշխատանք է կատարելու , ինչ նպատակ է հետապնդում այն , ինչ խնդիրներ են լուծելու, երբ են սկսելու աշխատանքը , երբ են ավարտելու, ինչ մեթոդներ , հնարներ են կիրառելու , ինչպես են վերահսկելու սեփական աշխատանքի կատարումը, ինչպես են վերլուծելու ստացված արդյունքները։ Ինքնուրույնության զարգացման համար ուսուցման

[4] Выготский Л. С. Психология развития ребенка.

լավագույն կազմակերպման ձևը խմբային, համագործակցային աշխատանքն է: Երբ երեխան իր աշխատանքը համեմատում է մյուսների աշխատանքի հետ և գնահատում իրեն , այս տեսակ գնահատումն առավել մեծ նշանակություն է ունենում իր անձի ձևավորման վրա: Սովորողների ինքնուրույնության զարգացման նպատակով անհրաժեշտ է՝

- Առաջին օրերից սկսած երեխաներին մասնակից դարձնել ընդհանուր շաբաթվա գործերի պլանավորմանը, ինչպես նաև մշակել իրենց գործերը պլանավորելու հմտություններ:
- Երեխաների հետ միասին քննարկել և ամփոփել շաբաթական պլանների իրագործումն ու արդյունքները:
- Երեխաների համար հասանելի ձևով զարգացնել հասարակական և կոլեկտիվ աշխատանքները գնահատելու և արժևորելու կարողություններ:
- Մարզել երեխաների՝ միմյանց պատասխանները քննարկելու և գնահատականները վերլուծելու կարողությունը:
- Քննարկել արարքները, վերլուծել և գնահատել:
- Երեխաների սխալների հանդեպ հանդուրժող լինել, հակառակ դեպքում երեխաների մեջ վնասվում է առաջին հերթին նախաձեռնողականությունը, այսինքն ինքը՝ ինքնուրույնությունը:
- Անընդհատ հետաքրքրվել երեխաների տեսակետներով և կարծիքներով:
- Երբ երեխան օգնություն է խնդրում, նախ վստահություն հայտնել , որ դա նա կարող է անել ինքնուրույն : Եթե դա չօգնի, ուղղակի ուղղորդող խորհուրդներ տալ: Եթե այս կերպ էլ երեխան չկարողանա կատարել հանձնարարությունը, ապա աստիճանաբար օգնության չափը մեծացնել:
- Առավել շատ հարցել տալ երեխաներին, իսկ բացատրությունների դիմել միայն այն դեպքում , երբ այլ կերպ հնարավոր չէ նյութի ընկալումը:
- Վստահ լինել, որ երեխաներից կարելի է շատ բան սովորել և ստանալ :

Սա գրեթե յուրաքանչյուր ուսուցչի համար մատչելի ժողովրդավարական միջոցների համախումբ է: Ուսումնական գործունեության մեջ կարևորվում է երեխայի ակտիվությունը, ինչն առավելագույնս դրսևորվում է խաղային ուսուցման ժամանակ: Խաղը երեխայի սոցիալական հասունացման ամենահուսալի ուղին է:

Խաղի ժամանակ երեխաները շփվում են իրենց հասակակիցների հետ: Նրանց միացնում են ընդհանուր հետաքրքրություններն ու ապրումները, նպատակին հասնելու միասնական ջանքերը: Խաղը երեխաներին սովորեցնում է իրենց գործողություններն ու մտքերը ծառայեցնել որոշակի նպատակի, դաստիարակում նպատակասլացություն: Երեխան իրեն սկսում է զգալ որպես ընդհանուր խմբի անդամ, արդարացիորեն գնահատել իր և ընկերների գործողություններն ու արարքները:

Խաղն ունի մի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխային կարող է ընդգրկել ակտիվ ուսուցման և նույնիսկ այս կամ այն խնդրի լուծման ընթացքի մեջ: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում՝ տարվելով հետաքրքրաշարժությամբ և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը[5]: Դպրոցում մանկավարժական գործընթացում խաղերը չեն կարող ինքնանպատակ լինել : Խաղը պետք է հանդես գա ոչ թե որպես առանձին հնար, այլ միաձույլ լինի ուսուցմանը և ծառայի ուսումնական նպատակին: Հարկավոր է երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և այդ կերպ նպաստել մանկավարժական խնդիրների լուծմանը: Ինչպես ցանկացած հնար, ուսումնական տեխնոլոգիա, այնպես էլ հետաքրքրաշարժության տարրերով հարուստ խաղը կարող է նույնիսկ ձանձրացնել երեխաներին, եթե չփոփոխվի ու անընդհատ կրկնվի նույնությամբ: Այդ իսկ պատճառով խաղը պետք է կիրառվի ստեղծագործաբար: Ցանկացած խաղ ցանկալի է տեսնել ոչ թե անխախտ կաղապարի, այլ աստիճանական զարգացման մեջ, որպեսզի երեխայի մեջ չկորչի հետաքրքրությունը թե՛ դրա և թե՛ ուսուցման նկատմամբ:

Ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները սևեռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել: Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները: Կարևոր է նաև այս ամենի դաստիարակչական կողմը, քանի որ այդ ընթացքում երեխաները մոտիկից առնչվում են, մրցակցում, վիճում, իրար

[5] Լ. Ս. Վիգոտսկի, «Խաղը և դրա դերը երեխայի մտավոր զարգացման մեջ», 2002:

օգնում, դառնում են ինքնուրույն և ընկերասեր։ Խաղերը միայն դասը հետաքրքրաշարժ, զվարճալի ու բազմերանգ դարձնելու համար չեն միայն, դրանք առաջին հերթին ուսանելիեն և նոր գիտելիքներ են հաղորդում, սովորեցնում միտքը լարել, տրամաբանել։ Խաղերը զարգացնում են երեխայի երևակայությունը, արագորեն լուծումներ գտնելու կարողությունը, յամակցված մտածողությունը։

Խաղային գործունեության ընթացքում երեխան՝

- Ինքնադրսևորվում է, բացահայտում իր առանձնահատկությունները։
- Սոցիալական հարաբերությունների մեջ է մտնում ընկերների հետ և ինքնուրույն կարգավորում իր հարաբերությունները։
- Փորձում է ինքնուրույն հաղթահարել խոչընդոտները։
- Առաջադրված խնդիրներին սովորական կամ անսպասելի խնդիրներ է գտնում։
- Սովորում է իր առջև խնդիրներ դնել և լուծել։

Կրթական առաջընթաց ապահովելու առումով խիստ կարևոր է , որ աշակերտը պատկերացնի ուսումնական նյութի՝ իր իմացության մակարդակը և սեփական ուժերով դժվարությունները հաղթահարելու կարողության չափը։ Այդ նպատակին է ծառայում ինքնագնահատումը։ Որպեսզի սովորողը գիտակցի, թե որքանով է ինքնագնահատումը նպաստում լավ սովորելուն, հարկավոր է նրան հնարավորություն տալ՝ ինքնուրույն պարզելու իր գիտելիքների մակարդակը, փնտրելու սեփական ուսման որակը բարելավելու միջոցներ և մշակել դրանք կիրառելու ռազմավարություն։

Աշակերտների ինքնուրույն գործունեության կարողությունների զարգացումը բարելավում է ուսուցման գործընթացում։ Ուսուցիչները և աշակերտները համատեղ գտնում են մի շարք խնդիրների լուծման ելքեր։

Ինքնուրույն գործունեության կարողությունների զարգացումը կրթության բարելավման և բարեթոխումների փուլում առավել արդիական է , տեղեկությունների հավաքման գործընթացի անբաժանելի մաս է[6]։

Ընտրել եմ «Քիչ ենք, բայց հայ ենք» թեման, որպեսզի ավելի անրապնդեմ հայրենի երկրի մասին ունեցած երեխաների գիտելիքները։ Ուսուցչի ուղղորդման միջոցով աշակերտները ինքնուրույն՝ հետազոտական աշխատանքի շնորհիվ

[6] Ուսուցչի մեթոդական ուղեցույց, Երևան, 2010։

հասկանան, որ հայ ժողովուրդը քիչ է թվով, սակայն նրա մեծության չափանիշն այլ է։ Հասկանա, որ հայ ժողովուրդը աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն է, որ միշտ կառուցել է, ցանել ու հերկել, սիրել է գիրն ու գրականությունը։ Նրա ստեղծած հարուստ հոգևոր մշակույթը, հինավուրց վանքերն ու տաճարները հայտնի են աշխարհին։ Միաժամանակ նրան բնութագրում են այնպիսի գծեր, ինչպիսիք են՝ բարությունը, ազնվությունը, երախտագիտությունը, հպարտությունը սեփական ձիրքերի համար ։ Ինչպիսի՞ն ենք ուզում տեսնել մեր հայրենիքը, ի՞նչ պիտի անենք և ինչպե՞ս պաշտպանենք ու հզորացնենք այն։ Որ հայրենիք ասելով հասկանում ենք տուն, օջախ, ծննդավայր , հող , ջուր, հավատ, երգ։

Աշխատանքների ազդեցությունը չափելու եմ հարցաշարերի և խաղերի միջոցով։

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Դաս 1. Թեմա – Քիչ ենք, բայց հայ ենք

Նպատակը.

- Խմբային աշխատանքի միջոցով ամբողջացնել Հայաստանի մասին գիտելիքները
- Գիտելիքները հարստացնել Հայաստանի, նրա պատմության ու մշակույթի մասին տեղեկություններով:
- Զարգացնել երեխաների մտածողության հնարավոր բոլոր ձևերը:
- Զարգացնել հաղորդակցվելու, հանդուրժողականության, բարի կամքի դրսևորման և արտահայտվելու կարողություններ:
- Դասընթարակել միմյանց լսելու, դիմացինի խոսքը հարգելու, ազատ վերլուծելու և արտահայտվելու կարողություններ:
- Խաղի միջոցով ինքնուրույն գործունեության կարողության զարգացումը:
- Օգնել երեխաներին, որպեսզի հասնեն ինքնագնահատման որոշակի մակարդակի:

Վերջնարդյունք.

Ունենալ սեփական կարծիք Հայաստանի ու հայերի մասին՝ դրսևորելով արժեքային համակարգի պահանջները:

Կարողանալ խմբային աշխատանքի , խաղի միջոցով իրենց գորշողություններն ու մտքերը ծառայեցնել որոշակի նպատակի , դաստիարակել նպատակասլացություն:

Կարողանալ ինքնուրույն հավաքագրել տեղեկություններ հայրենի բնօրրանի, հերոսների մշակութային ժառանգությունների մասին:

Կարողանալ ինքնադրսևորվել, բացահայտել իրենց առանձնահատկությունները, սոցիալական հարաբերությունների մեջ մտնել ընկերների հետ, փորձել ինքնուրույն հաղթահարել խոչընդոտները:

Դասի ընթացքը – 1. Խթանում

Այս փուլում դասը սկսում եմ «Ո՞վ ենք» խաղի կիրառմամբ: Դասարանը բաժանում եմ 3 խմբի: Յուրաքանչյուր խմբի տալիս եմ ծրար, որը պարունակում է 3 նախադասություն տարբեր երկրների և ազգությունների մասին, որոնցից մեկը Հայաստանի և հայերի մասին է: Ապա երեխաներին բացատրում եմ , որ խմբերը

դրանց միջից պետք է ընտրեն այն 3 մտքերից, որոնք վերաբերում են Հայաստանին և հայ ազգին։ Աշխատանքն ավարտելուց հետո երեխաները իրենց դուրս բերած մտքերը փակցնում են գրատախտակի վրա ուրվագծված Հայաստանի քարտեզին։ Աշխատանքն ամփոփելով առաջարկում եմ աշակերտներին Հայաստանին ու հային բնորոշ էլ ինչ մտքեր կավելացնեն։

2. Իմաստի ընկալում.

Խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվում է.

1. Բանաստեղծությունից դուրս գրել այն հատկանիշները, որոնք բնորոշ են հայ ժողովրդին։
2. Թվարկել այն խորհրդանիշները, որոնք հպարտության զգացում են ծնում բանաստեղծի հոգում է ՝ հայ լինելու համար , պատմել ինչ գիտեն դրանց մասին։
3. Արևի շողերի վրա բնութագրել հայ ժողովրդին։

3. Կշռադատում – ամփոփում

Այս փուլում աշակերտները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները , ստուգում իրենց և ամփոփում իմ պատրաստած աշխատանքները, ստուգում իրենց և ամփոփում իմ պատրաստած հարցաշարի միջոցով։

- «Քիչ ենք» ասելով հեղինակն ի՞նչ նկատի ունի
- Որոնք են այն խորհրդանիշները, որ հպարտության զգացում էին ծնում բանաստեղծի հոգում։
- Բանաստեղծության ընդգծված տողերը հայ ժողովրդի ո՞ր հատկանիշներն են բնութագրում։

Տնային հանձնարարություն

- Հավաքագրել և հաջորդ դասին ներկայացնել հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի որևէ դեպք։
- Գրել փոքրիկ շարադրանք «Ես հպարտ եմ, որ հայ եմ» վերնագրով։
- Պատրաստել պաստառ, որի վրա նկարագրված է Հայաստանի խորհրդանիշները, հայ ժողովրդի ստեղծած հարուստ հոգևոր մշակույթը ՝ վանքերն ու տաճարները։

Դաս 2.

Նպատակը.

1. Ստուգել անցած դասին սովորածը, ներկայացնեն իրենց հանձնարարված աշխատանքները։
2. Որքանով կարողացան իրականացնել իրենց առջև դրված նպատակները։
3. Երեխաները կքննարկեն և կհամոզվեն , թե արդյոք կատարել են այն , ինչ հանձնարարվել էր։

Վերջնարդյունք.

Կարողանան արտահայտել սեփական կարծիքը հայ ժողովրդի հանդեպ, ինչ պետք է անեն, որպեսզի արժանի լինեն մեր նախնիներին։ Ինչ ձեռքբերումներ ունեցան այդ կատարած աշխատանքներից ՝ գիտելիքներ, զգացմուքքբեր, կարողություններ, հմտություններ։

Ընթացքը-Խթանում.

Այս փուլում երեխաները գրատախտակին բնութագրում են , թե ինչ են հասկանում «հայրենիք» ասելով։

Իմաստի ընկալում.

Այս փուլում կիրառում ենք «Ո՞վ եմ ես» խաղը։ Ամրապնդում իրենց գիտելիքները Հայաստանի ու հայ ժողովրդի մասին։ Ընթերցում են իրենց հանձնարարված շարադրանքը, ներկայացնում են իրենց պատրաստած պաստառը, բովանդակությունը։

Կշռադատում.

Կիրառեցի «Գիտեի|իմացա» մեթոդը։ Ներկայացրին իրենց գրած շարադրանքը և պատրաստած պաստառը փակցրեցին պատին։ Աշակերտները գնահատվեցին և հանձնարարվեց տնային աշխատանքը։ Աշակերտների աշխատանքների արդյունավետությունը և գիտելիքների յուրացման աստիճանը ստուգելու համար ես պատրաստել էի հարցաշարեր։ Երեխաների մեծ մասը շատ լավ էր յուրացրել նյութը։



Առաջին դասին ունեցա 35% արդյունք, իսկ 2-րդ դասին՝ դրանից ավելին։ Կարծում եմ, որ հաճախ կիրառելով խաղային տեխնոլոգիաները և արդի ժամանակակից մեթոդները դասերի ժամանակ մենք կարող ենք նպաստել երեխաների ինքնուրույն գործունեության զարգացմանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով աշակերտների ինքնուրույն գործունեությունը զարգացնելու նպատակով ես «Մայրենի» առարկայի՝ «Քիչ ենք, բայց հայ ենք» դասանյութի ուսուցման ժամանակ կիրառեցի խաղային տեխնոլոգիաները և «Համագործակցային» մեթոդը: Կարծում եմ, որ դրանք դրական ազդեցություն ունեցան դասանյութի լավ յուրացման վրա: Քանի որ խաղը և խմբային աշխատանքի կիրառությունը նպաստում է ուսումնական գործունեության ակտիվացմանը, ուսումնական նյութի և ուսումնական գործընթացի հանդեպ հետաքրքրության ձևավորմանը, սովորողների ստեղծագործական, ճանաչողական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, սեփական նախաձեռնություն ցուցաբերելու կարողությունը: Այս կերպ ձեռք բերված գիտելիքները ավելի լավ են մտապահվում, և ձևավորվում է այնպիսի միջավայր, որտեղ սովորողները ազատորեն հայտնում են իրենց մտքերը, անկաշկանդ քննարկում իրենց մտահոգող հարցերը և կիսվում իրենց կարծիքներով: Դասարանում ամենապասիվ աշակերտն անգամ ներգրավվելով խաղի, խմբային աշխատանքի մեջ ցուցաբերում է ակտիվություն, նրանց մոտ գրանցվում է ուշադրության աճ և աշխատանքի վրա կենտրոնացում: Այս աշխատանքի ժամանակ բոլորը հավասար են, բոլորը զբաղված են, բոլորն են պատկերացնում դասապրոցեսում իրականացվող դասի բովանդակությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լ. Ս. Վիգոտսկի, «Խաղը և դրա դերը երեխայի մտավոր զարգացման մեջ», 2002։
2. Շ.Ա. Ամոնաշվիլի. Բարև՛ երեխաներ։ Ձեռնարկ ուսուցչի համար «Լույս» 1990
3. Շ.Ա. Ամոնաշվիլի, Մարդասիրական մանկավարժության հիմնադրույթներ։
4. Ուսուցչի մեթոդական ուղեցույց, Երևան, 2010։
5. М. Монтессори. Помоги мне сделать это самому.
6. Выготский Л. С. Психология развития ребенка.